Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆՅԱԼ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ 1993 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամների և մասնակիցների, ինչպես նաև նրանց կարգավիճակին հավասար դասվող անձանց համար արտոնյալ երթևեկության իրավունքների փախադարձ ճանաչման մասին 1993 թվականի մարտի 12-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. 8-րդ հոդվածը լրացնել երկրորդ պարբերությամբ՝ հետևյալ խմբագրությամբ.

«Կողմերը, ազգային օրենսդրությանը համապատասխան, ամբողջությամբ հոգում են Համաձայնագրի 2-րդ, 3-րդ հոդվածներում նշված անձանց արտոնյալ երթևեկության իրավունքների իրագործման հետ կապված ծախսերն իրենց տարածքներում մշտապես բնակվող՝

- իրենց քաղաքացիների,
- Համաձայնագրի մասնակից պետությունների քաղաքացիների,
- քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ»:

2. Համաձայնագիրը լրացնել հետևյալ բովանդակությունն ունեցող 8¹-րդ հոդվածով.

«Համապատասխան տրանսպորտային միջոցներով երթևեկության սահմանված արտոնությունների փոխարեն Կողմերը կարող են կատարել դրամական հատկացումներ՝ ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 2

Սույն Արձանագրությունը Համաձայնագրի անբաժանելի մասն է և ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն այն ստորագրած Կողմերի կողմից կատարվելու վերաբերյալ երրորդ ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից, իսկ ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար՝ ավանդապահին համապատասխան ծանուցումները հանձնելու օրվանից:

Կատարված է Աշգաբադ քաղաքում 2007 թվականի նոյեմբերի 22-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների

Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն Արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

Սույն Արձանագրությունն ստորագրվել է Ադրբեջանի Հանրապետության Կառավարության, Հայաստանի Հանրապետության Կառավարության, Բելառուսի Հանրապետության Կառավարության, Ղրղզստանի Հանրապետության Կառավարության, Մոլդովայի Հանրապետության Կառավարության (վերապահումով), Ռուսաստանի Դաշնության Կառավարության, Տաջիկստանի Հանրապետության Կառավարության և Ուկրաինայի Կառավարության կողմից:

Հայաստանի Հանրապետության համար Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2010թ. մարտի 1-ին:

Մոլդովայի Հանրապետության վերապահումը

Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամների և մասնակիցների, ինչպես նաև նրանց կարգավիճակին հավասար դասվող անձանց համար արտոնյալ երթևեկության իրավունքների փոխադարձ ճանաչման մասին 1993 թվականի մարտի 12-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին արձանագրությանը

2007 թ. նոյեմբերի 22 Ք. Աշգաբադ

«Մոլդովայի Հանրապետությունը կկիրառի սույն Արձանագրության դրույթները ազգային օրենսդրությանը համապատասխան՝ պետական բյուջեում ամեն տարի հաստատվող միջոցների շրջանակներում»:

Վարչապետ՝ Վասիլե Տարլև